ArmLur.am

ISSN 1829-2763

ՕՐԱԹԵՐԹ ԲՈԼՈՐԻ ԵՎ ԱՄԵՆ ԻՆՉԻ ՄԱՍԻՆ

Ժողովուրդ

176
(2656)

7 դեկտեմբերի չորեքշաբթի 2022
2022տպագրության ԺԱ տարի

100 դրամ

քաղ. Երեւան, Աբովյան 22ա/3 (0010) + 374 10 546423 info.armlur@gmail.com, info.zhoghovurd@gmail.com

ՆԻԿՈԼ ՓԱՇԻՆՅԱՆԸ ԽԱԲԵԼ Է. ՄԱՍ 149

«Դոլարային արտահայտությամբ՝ Հայաստանի պետական պարտքը հատել է 10 միլիարդի շեմը: Նոյեմբերի սկզբի դրությամբ պարտքը կազմել է 10 մլրդ 63 մլն դոլար: Այլ պարագայում Նիկոլ Փաշինյանը կասեր՝ սա պատմական ռեկորդ է: «Ժողովուրդ» օրաթերթը նկատում է՝ ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանը, որը նախկինում դեմ էր պարտք վերցնելուն, եկավ ու սկսեց պետական պարտքն ավելի մեծ տեմպերով ավելացնել: Նախկինում ասում էր՝ պարտքը վատ բան է, հիմա ասում է՝ դրանով դպրոցներ ու մանկապարտեզներ, ճանապարհներ ու շենքեր ենք կառուցում: Նիկոլ Փաշինյանը նախկինում դեմ էր պարտք վերցնելուն, հիմա արդարացնում է: 168.am-ը հաշվարկել է եւ նկատում է, որ միայն այս տարվա ընթացքում պետական պարտքի գինը բարձրացել է 1,3 տոկոսային կետով: Եթե տարվա սկզբին պարտքի միջին կշռված տոկոսադրույքը 4,7 էր, հիմա դարձել է 6 տոկոս: Սա պարտքի չափազանց կտրուկ թանկացում է, որը տեղի է ունեցել ընդամենը 10 ամսվա ընթացքում: «Արտաքին վարկերի միջին կշռված տոկոսադրույքն այս տարի բարձրացել է 1,1 տոկոսային կետով, գրեթե կրկնապատկվել է. տարեսկզբին ընդամենը 1,5 տոկոս էր, հիմա դարձել է 2,6 տոկոս: Կանխատեսվում է, որ մինչեւ տարեվերջ էլ ավելի կբարձրանա, ֆինանսների նախարարի գնահատումներով՝ կհասնի ընդհուպ 2,9 տոկոսի: Բայց դրանով էլ արտաքին պարտքի թանկացումը կանգ չի առնի: Հաջորդ տարվա համար կանխատեսվում է, որ այն կկազմի 4,1 տոկոս՝ այս տարի սպասվող 2,9-ի փոխարեն: Պատկերացնում եք, 2 տարում 1,5 տոկոսից արտաքին պարտքի գինը կհասնի 4,1 տոկոսի», - նկատում է լրատվամիջոցը: Այսինքն՝ հերթական անգամ ականատես ենք լինում մի իրավիճակի, երբ ընդդիմադիր եւ վարչապետ Նիկոլ Փաշինյանի տեսակետները միմյանցից տարբերվում են, եւ նա այժմ արդարացնում է մի բան, որը նախկինում դատապարտում էր:

Բարձրագույն դատական խորհրդի նախագահ Կարեն Անդրեասյանի գլխավորությամբ տեղի ունեցած վճռաբեկ, վերաքննիչ եւ առաջին ատյանի դատավորների մասնակցությամբ աշխատաժողովը թանկ է արժեցել ՀՀ պետական բյուջեի վրա: Մասնավորապես, նոյեմբերի 25-ից 27-ը «Գետափ Դիլիջան» ռեստորանում ՀՀ դատավորների աշխատաժողովի ընթացքում ՀՀ դատական դեպարտամենտը 1 մլն 346 հազար դրամի պայմանագիր է կնքել «Սուրեն Աղաջանյան» ՍՊԸ-ի հետ: «Ժողովուրդ» օրաթերթը տեղեկացավ, որ ընթրիքը կազմակերպված է եղել 132 անձի համար: Ընդ որում՝ ընթրիքն իր մեջ ներառել է մսի, թթվի, պանրի տեսակների, երկու տեսակի աղցաններ, հիմնական ուտեստ եւ խավարտ, ինչպես նաեւ աղանդեր: Բացի այդ, նույն աշխատաժողովի կազմակերպման համար Դատական դեպարտամենտը պայմանագիր է կնքել «Դիլիջան առողջարան» ՓԲԸ-ի հետ եւ 1 մլն 888 հազար դրամ տրամադրել 38 հոգու՝ երկու օրվա գիշերակացը կազմակերպելու համար: Տեղեկացանք, որ պատվիրված են եղել 4 կիսալյուքս, 34 ստանդարտ համարներ, եւ պատվիրված է եղել նաեւ նախաճաշ՝ 38 հոգու համար: Սակայն սա էլ դեռ ամենը չէ. նոյեմբերի 25-ից 27-ի համար աշխատաժողովի մասնակիցների համար գիշերակաց է կազմակերպվել նաեւ «Բեսթ Վեսթերն Փլաս Փարադայս Հոթել Դիլիջան» հյուրանոցում 83 հոգու համար, եւ տրամադրվել է 2 մլն 642 հազար 600 դրամ, իսկ 5 մլն 361 հազար դրամ էլ տրամադրվել է այդ նույն հյուրանոցում 83 հոգու համար 2 անգամ նախաճաշ, 130 հոգու՝ 2 անգամ ճաշ , սուրճի ընդմիջում եւ մեկ անգամ ընթրիք կազմակերպելու համար: Այսինքն՝ երկու օր Դիլիջանում աշխատաժողով կազմակերպելու համար մեկ անձից կատարվել է 9 մլն 538 հազար դրամի գնում:

Շուտով կլրանա «Սուրմալու» առեւտրի կենտրոնի պայթյունի գործով հարուցված քրեական վարույթի 4-րդ ամիսը, սակայն խոշոր ձկները մինչ օրս պատասխանատվության չեն ենթարկվել: «Ժողովուրդ» օրաթերթի տեղեկությունների համաձայն՝ նախաքննական մարմինը հարցաքննել է Երեւանի «Սուրմալու» առեւտրի կենտրոնի սեփականատեր Ռազմիկ Զախարյանին, սակայն չեն կարողանում գտնել առեւտրի կենտրոնի պահեստապետին: «Ժողովուրդ» օրաթերթը դիմեց ՀՀ քննչական կոմիտե՝ հասկանալու համար, թե ինչ է կատարվում քրեական գործով, եւ արդյոք սեփականատերը հարցաքննվել է, ինչ կարգավիճակ ունի նա: Ի պատասխան՝ ՀՀ քննչական կոմիտեից «Ժողովուրդ» օրաթերթին հայտնեցին, որ «Սուրմալու» առեւտրի կենտրոնի պայթյունի գործով հարուցված քրեական վարույթով նախաքննությունը շարունակվում է, վարույթի շրջանակում բազմաթիվ անձինք են հարցաքննվել, այդ թվում նաեւ՝ սեփականատերը, նշանակած փորձաքննության եզրակացությունը դեռեւս ստացված չէ, այս պահին մեղադրյալի կարգավիճակ ունի 4 անձ, որոնցից երկուսի նկատմամբ կիրառված է խափանման միջոց կալանքը: Այս վարույթի շրջանակում հետախուզման մեջ գտնվող անձ չկա: Նկատենք, որ 4 մեղադրյալներից երեքը պահեստը շահագործող անձինք են, չորրորդը՝ «Սուրմալու»-ի փոխտնօրենը, որը ազատության մեջ է: Հիշեցնենք, որ օգոստոսի 14-ին «Սուրմալու»- առեւտրի կենտրոնում պայթյուն եղավ, որի հետեւանքով 16 մարդ զոհվեց, եւս մեկը համարվում է անհետ կորած:



Այսուհետ Հայաստանի Հանրապետության պաշտոնաթող նախագահներին եւ վարչապետներին պետական պահպանություն հնարավոր կլինի տրամադրել միայն վարչապետի որոշմամբ: Այսինքն՝ ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանը շարունակում է ավելացնել իր լիազորությունները, չնայած ընդդիմադիր պատգամավոր եղած ժամանակ դեմ էր, որ երկրի ղեկավարն այդքան շատ լիազորություններ ունենա: Հայտնի է, որ դեկտեմբերի 9-ին ՀՀ Ազգային ժողովն արտահերթ նիստ է գումարելու, որի օրակարգում ընդգրկված է նաեւ «Հատուկ պետական պաշտպանության ենթակա անձանց անվտանգության ապահովման մասին» օրենքում փոփոխություններ եւ լրացումներ կատարելու մասին օրենքների նախագծերի փաթեթը: «Ժողովուրդ» օրաթերթը տեղեկացավ, որ այս նախագծերով առաջարկվում է սահմանափակել հանրապետության պաշտոնաթող նախագահներին եւ վարչապետներին տրամադրվող անձնական պետական պահպանության տրամադրման ժամկետները: Մասնավորապես, առաջարկվում է Հայաստանի Հանրապետության տարածքում հանրապետության նախագահներին եւ վարչապետներին տրամադրվող անձնական պետական պահպանության տրամադրման ժամկետը սահմանափակել համապատասխանաբար 7 եւ 10 տարիներով: Առաջարկվում է նախատեսել նաեւ իրավակարգավորումներ, որոնց պարագայում հանրապետության պաշտոնաթող նախագահներին եւ վարչապետներին օտարերկրյա պետություններում գտնվելու ժամանակ պետական պահպանություն կտրամադրվի մեկ տարվա ընթացքում օտարերկրյա պետություններ կատարվող ոչ ավելի, քան 20 օր ընդհանուր տեւողությամբ այցերի ընթացքում: Այս նախագծով Ազգային անվտանգության ծառայության գրասենյակի կարգավիճակ ունեցող Պետական պահպանման ծառայությունը ունենալու է վարչապետին ենթակա մարմնի կարգավիճակ, ավելին՝ պետական պահպանության ծառայության ղեկավարը նշանակվելու եւ ազատվելու է հանրապետության նախագահի կողմից՝ վարչապետի առաջարկությամբ, իսկ առաջին տեղակալը՝ վարչապետի կողմից՝ Ազգային անվտանգության ծառայության տնօրենի ներկայացմամբ: Այսինքն՝ այստեղ եւս վարչապետը նոր լիազորություններ կունենա եւ ԱԱԾ-ից կվերցնի ՊՊԾ ծառայությունը՝ տանելով իր ենթակայության տակ:

ՀԱՐՑԱՔՆՆՈՒԹՅՈՒՆ

ԽՈՐՀՐԴԱՐԱՆ ԿԳԱ ՀՀ ԳԼԽԱՎՈՐ ԴԱՏԱԽԱԶԸ

«Ժողովուրդ» օրաթերթի տեղեկություններով՝ ԱԺ «Հայաստան» խմբակցության դատգամավոր Գեղամ Մանուկյանին մեղադրանք առաջադրելու համար խորհրդարան կգա ՀՀ գլխավոր դատախազ Աննա Վարդապետյանը:

Մենք գրել էինք, որ Գեղամ Մանուկյանը հայտնվել է իրավապահների ուշադրության կենտրոնում քուրդ ազատամարտիկների՝ Թուրքիայում հայտնվելու դեպքով արած հայտարարությունների համար: Բանն այն է, որ «ԱԺ կանոնակարգ» օրենքի 108-րդ հոդվածի համաձայն՝ պատգամավորի նկատմամբ քրեական հետապնդում հարուցել կամ ազատությունից զրկել հնարավոր է միայն Ազգային ժողովով՝դատախազի միջնորդության հիման վրա: Ընդ որում՝ պատգամավորի նկատմամբ քրեական հետապնդում հարուցելուն կամ նրան ազատությունից զրկելուն համաձայնություն տալու մասին Ազգային ժողովի որոշումն ընդունվում է գաղտնի քվեարկությամբ:

Հիշեցնենք, որ Գեղամ Մանուկյանը ԱԱԾ-ում հարցաքննվել էր քուրդ ազատամարտիկների՝ Թուրքիայում հայտնվելու դեպքով տարվող քրեական գործով, ինչը հենց Մանուկյանը հաստատել էր մեզ հետ զրույցում: «Ժողովուրդ» օրաթերթը ավելի վաղ գրել էր, որ ԱԱԾ-ում քրդերի՝ Թուրքիայում հայտնվելու առեղծվածային դեպքով քրեական գործ է հարուցվել, եւ բավականին խիստ է դրվել հարցը՝ պարզել, թե ինչպես են երկու քուրդ ազատամարտիկները հայտնվել Թուրքիայի ուժային կառույցներ մոտ: Հիշեցնենք նաեւ, որ երկու քրդերը Հայաստանում 2021 թվականի օգոստոսի 16-ին ապօրինի հատել էին Արաքս գետով անցնող՝ ՀՀ պահպանվող պետական սահմանը:

Այս եւ այլ հարցերի շուրջ «Ժողովուրդ» օրաթերթը զրուցել է ԱԺ «Հայաստան» խմբակցության պատգամավոր Գեղամ Մանուկյանի հետ:

-Պարոն Մանուկյան, Ձեր հրապարակումից հետո քուրդ ազատամարտիկների մասով ԱԱԾ-ն հարուցեց քրեական գործ եւ Ձեզ հրավիրեց հարցաքննության: Հիմա մենք տեղեկություններ ունենք, որ Ձեզ պատրաստվում է նախաքննական մարմինը մեղադրանք առաջադրել: Կպատմե՞ք հարցաքննության մասին:

-Պետք է ի սկզբանե պարզաբանեմ, որ քրդական լրատվական խոշոր գործակալություններից մեկը տեղեկություն էր հրապարակել, որ հայկական կողմը Թուրքիային է փոխանցել երկու քուրդ ազատամարտիկների, որոնք կալանավորված են եղել Երեւանում: Եվ իրականում մինչեւ իմ հրապարակումը՝ երկու-երեք օր, քրդախոս սոցմեդիան ուղղակի առավոտվանից գիշեր գրում էին այդ զազրելի երեւույթի մասին, եւ լուրջ հակահայկական մթնոլորտ էր ձեւավորվել: Եղան հրապարակում եւ պետական գերատեսչությունների պարզաբանումներ, հետո հրավիրեցին որպես վկա հարցաքննության ինձ: Որքանով տեղյակ եմ, երկու դրվագով է հարուցված քրեական գործ՝ազգային թշնամանք սերմանել եւ անօրինական սահման հատել: Մի հարցաքննություն է եղել, որի ժամանակ մանրամասնն պարզաբանել, ներկայացրել եւ հերքել եմ ԱԱԾ-ի մոնիթորինգային խմբի սխալ մոնիթորինգը: Իմ հրապարակումը հանդարտեցնող է դարձել, որը նաեւ տարածվել է քրդական սոցմեդիայում, եւ հետագայում հակահայ տոնայնություն այլեւս չկար: Բոլորը հասկացել էին, որ սա քրդերի դեմ ուղղված գործողություն չէ, մնացածն արդեն թող իրավապահները պարզեն:

-Հիմա նախաքննական մարմինը Ձեր դեմ կոնկրետ թշնամանք հարուցելու մասով է քրեական գործ հարուցել: Այդ մասով Դուք ի՞նչ կասեք:

-Դուք երեւի ավելի շատ եք տեղյակ, քան ես: Ձեր լրատվամիջոցում լուր եղավ, եւ հաջորդ օրը ինձ կանչեցին հարցաքննության: Որպես պատգամավոր ինձ համար ցավալի է, որ ավելի արագ լուրը հանրայնացվում է, քան իրավապահները գործում են: Ինձ մեղադրանք չի առաջադրվել. եթե այդ տեղեկությունը տարածվի, ապա դահլիճում նստած է իշխանական պատգամավորներից մեկը, եւ նա եթե լսի, կծիծաղի: Ես իմ գործունեությամբ շատ ակտիվ եմ եղել հայ-քրդական հարաբերությունների մասով, եւ ինձ մեղադրել այդ ժողովուրդների միջեւ թշնամանք հարուցելու հարցում չեն կարող: Ինձ հարցեր ուղղել են, ենթադրություններ ունեն, ես մանրակրկիտ պարզաբանել եմ, թե ինչ եմ ի նկատի ունեցել իմ հայտարարություններով: Եթե թեկուզ Ազգային ժողովում այդ հարցը քննարկվի, շատ հանգամանալից կխոսեմ:

Զրուցեց ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆԸ

ԼՌՈՒՄ ԵՆ

ԱԴՐԲԵՋԱՆԸ ԳԱԶ ՈՒՆԻ

Ադրբեջանն ունի բռնակալ իշխանություն, բայց գազ՝ այս պահին թանկարժեք բան. Իսպանիայի Իսպանիայի Կոնգրեսի դատգամավոր Ջոն Ինյարիտուն օրեր առաջ Հայաստանում էր:

ՀՀ Ազգային ժողովում պատգամավորների հետ հանդիպումից հետո Իսպանիայի Կոնգրեսի պատգամավորն այցելել է նաեւ Գեղարքունիքի մարզի Սոթք բնակավայր եւ տեսաուղերձով ցույց տվել Ադրբեջանի՝ սեպտեմբերին կատարած վայրագությունների հետեւանքները, կոչով դիմել միջազգային հանրությանը՝ ստիպելու Ադրբեջանին հարգել խաղաղության օրակարգը, հեռանալ Հայաստանի այն տարածքներից, որոնք օկուպացրել է: «Մենք գտնվում ենք Հայաստանում՝ Սոթքում: Այս ամբողջ տարածքը ռմբակոծվել է Ադրբեջանի կողմից սեպտեմբերին՝ հանգեցնելով քաղաքացիական զոհերի եւ հարյուրավոր տների ավերման: Մենք խնդրում ենք միջազգային հանրությանը գործել եւ ստիպել Ադրբեջանին հարգել խաղաղության օրակարգը, միջազգային մարդասիրական իրավունքը եւ հեռանալ հայկական հողից»,- նշել էր իսպանացի պատգամավորը: Այս առնչությամբ «Ժողովուրդ» օրաթերթը մի քանի հարց է ուղղել Իսպանիայի Կոնգրեսի պատգամավոր Ջոն Ինյարիտուին:

-Պարոն Ինյարիտու, Դուք Հայաստանում ի՞նչ հանդիպումներ եք ունեցել եւ ո՞ր վայրերում եք եղել:

-Նախորդ օրերի ընթացքում ես այցելել եմ Ջերմուկի եւ Վարդենիսի տարածք: Մենք տեսել ենք այն տարածքները, որոնք հարձակման են ենթարկվել սեպտեմբերին Ադրբեջանի կողմից, եւ որոնք այժմ օկուպացված են Ադրբեջանի զինված ուժերի կողմից: Վնասը դեռեւս զգալի է, բայց ամենամտահոգիչը այս քաղաքների բնակիչների կողմից զգացվող անապահովության զգացումն է: Ադրբեջանը միակողմանի եւ առանց պատճառի հարձակվել է քաղաքացիական օբյեկտների վրա եւ օկուպացրել հայկական տարածքը: Այն թույլ է տվել միջազգային իրավունքի ակնհայտ խախտում: Խաղաղությունն անհրաժեշտություն է ողջ Կովկասի եւ նրա բնակիչների համար, այդ իսկ պատճառով Ադրբեջանի վայրենի գործողությունները պետք է դատապարտվեն, եւ նրա ուժերը դուրս բերվեն հայկական տարածքից:

-Սակայն միջազգային հանրության կողմից պատշաճ արձագանք չենք տեսնում: Ըստ Ձեզ՝ ո՞րն է պատճառը:

-Կարծում եմ, որ երկու պատճառ կա. առաջին հերթին աշխարհը նայում է Ուկրաինայի հակամարտությանը՝ նուրբ իրավիճակ, որտեղ կան անվտանգության եւ տնտեսության համար մի քանի վտանգներ: Մյուս կողմից՝ Ադրբեջանն ունի բռնակալ ու կոռումպացված իշխանություն, բայց գազ ունի՝ այս պահին թանկարժեք բան, այդ իսկ պատճառով շատ պետություններ նայում են այլ կողմ եւ գործում կեղծավորությամբ:

Զրուցեց ՆԱԻՐԱ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆԸ

ՄԻԱՅՆ ՔՊ-ՈՎ

Ազգային ժողովի հերթական նիստի օրակարգը երեկ իշխող ուժը քննարկեց առանց ընդդիմադիրների: Նիստերի դահլիճ ընդդիմադիր «Հայաստան» խմբակցության անդամները եկան միայն օրվա վերջում, երբ հայտարարությունների ժամն էր, եւ ելույթներ ունեցան:

Խորհրդարանական աշխատանքը իշխանության ու ընդդիմության մասնակցությամբ այսքանով ավարտվեց: Նիստի հիմնական օրակարգը քննարկվեց միայն իշխանականների մասնակցությամբ: Այսօր եւս Ազգային ժողովի նիստերը կշարունակվեն, սակայն ԱԺ «Պատիվ ունեմ» խմբակցության քարտուղար Տիգրան Աբրահամյանն արդեն իսկ հայտնել է, որ այսօր եւս ընդդիմադիր խմբակցությունների պատգամավորները չեն մասնակցելու կառավարության հետ հարցուպատասխանին: Այդ օրերին ԱԺ է գալիս նաեւ Հայաստանի Հանրապետության վարչապետ Նիկոլ Փաշինյանը:

ՆՎԵՐ ՉԻ ԿԱՐԵԼԻ

Երեկ Ազգային ժողովում արդարադատության նախարարի տեղակալ Արփինե Սարգսյանը ներկայացրել է ««Հանրային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ եւ լրացումներ կատարելու մասին» նախագիծը, որը առավելապես հանրային պաշտոն զբաղեցնող անձի եւ հանրային ծառայողի կողմից նվերներ ընդունելու սահմանափակումների եւ շահերի բախման իրավիճակները կառավարելու վերաբերյալ է:

Ըստ այդմ, պաշտոնյաները պետք է միջոցներ ձեռնարկեն, որ իրենց ընտանիքի անդամները եւ իրենց հետ փոխկապակցված այլ անձինք (այս օրենքի իմաստով՝ փոխկապակցված անձինք են պաշտոն զբաղեցնող անձի ամուսինը, պաշտոն զբաղեցնող անձի կամ նրա ամուսնու զավակը (այդ թվում՝ որդեգրված), ծնողը (այդ թվում՝ որդեգրողը), քույրը, եղբայրը) չընդունեն նվեր կամ այն հետագայում ընդունելու համաձայնություն չհայտնեն, եթե առկա է հնարավոր կամ իրական կապ հանրային պաշտոն զբաղեցնող անձի կամ հանրային ծառայողի պաշտոնեական (ծառայողական) պարտականությունների կատարման եւ ստացված նվերի միջեւ: Եթե հանրային պաշտոն զբաղեցնող անձը կամ հանրային ծառայողը ստացել է նվեր, որը ողջամտորեն կարող է ընկալվել որպես իր պաշտոնեական (ծառայողական) պարտականությունների իրականացման կապակցությամբ տրված, ապա հանրային ծառայողը սահմանված կարգով անմիջապես, սակայն ոչ ուշ, քան հնգօրյա ժամկետում, հայտնում է տվյալ մարմնի՝ բարեվարքության հարցերով կազմակերպչին:

ՀԱԿԱՍԱԿԱՆ

Երեկ հակասական հայտարարություններ տարածվեցին Լաչինի միջանցքում անցակետ տեղադրելու շուրջ: Ադրբեջանական հենակետ տեղադրելու մասին լուրերը տարածվեցին Լեռնային Ղարաբաղում տեղակայված ռուսաստանցի խաղաղապահների հրամանատար գեներալ-մայոր Անդրեյ Վոլկովի՝ Ադրբեջանի հանրային հեռուստատեսությամբ արված հայտարարությունից հետո: Վոլկովն ասել էր, որ «Լեռնային Ղարաբաղը Հայաստանին կապող ճանապարհի վրա մինի մաքսակետ կտեղադրվի՝ հագեցած հատուկ սարքավորումներով»: Ավելի ուշ Արցախի ԱԱԾ-ն հերքեց Արցախը Հայաստանի հետ կապող միջանցքում ադրբեջանական հենակետ տեղադրելու մասին լուրերը: Ստեփանակերտը հայտնեց, որ հարցի շուրջ քննարկում է կազմակերպվել Վոլկովի հետ, որի ընթացքում «վերջինս հայտարարել է, որ միջանցքում հենակետ չի լինելու, այն ադրբեջանցիների կողմից չի վերահսկվելու, եւ միջանցքում՝ խաղաղապահների տեղակայման վայրերում, ադրբեջանցիներ չեն լինելու»: Այժմ էլ այդ մասին հայտարարություն է տարածել Արցախի անվտանգության խորհուրդը: Ըստ հայտարարության՝ խաղաղապահ զորակազմի պատասխանատվության գոտի արգելված առարկաներ մուտքը չթույլատրելու նպատակով ՌԴ խաղաղապահների կողմից դիտարկվել է Լաչինի միջանցքի թիվ 1 հենակետում ռենտգեն-սկաների տեղադրման հնարավորությունը մտնող տրանսպորտային միջոցների զննման նպատակով:

ԿԱԴՐԱՅԻՆ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազ Աննա Վարդապետյանի՝ դեկտեմբերի 5-ի եւ 6-ի հրամաններով՝ դատախազությունում տեղի են ունեցել կադրային փոփոխություններ, նաեւ՝ առաջխաղացումների ձեւով: Մասնավորապես՝Հովհաննես Քոչարյանը նշանակվել է Հայաստանի Հանրապետության զինվորական դատախազի տեղակալի պաշտոնին: Արդարադատության առաջին դասի խորհրդական Գեւորգ Խալաթյանը նշանակվել է Եղեգնաձորի կայազորի զինվորական դատախազի պաշտոնի՝ ազատվելով Եղեգնաձորի կայազորի զինվորական դատախազի տեղակալի պաշտոնից: Արարատի մարզի դատախազության դատախազ, երրորդ դասի խորհրդական Գագիկ Մնացականյանը փոխադրվել է եւ նշանակվել մարզի դատախազության ավագ դատախազի պաշտոնին: Վերժինե Առաքելյանը նշանակվել է Արարատի մարզի դատախազության դատախազի պաշտոնին: Արարատի մարզի դատախազության ավագ դատախազ, երկրորդ դասի խորհրդական Արեգ Խաչատրյանը փոխադրվել է եւ նշանակվել Շիրակի մարզի դատախազության դատախազի պաշտոնին: Երեւան քաղաքի Կենտրոն եւ Նորք-Մարաշ վարչական շրջանների դատախազության դատախազ, արդարադատության երրորդ դասի խորհրդական Ռազմիկ Արսենյանը փոխադրվել է եւ եւ նշանակվել Երեւան քաղաքի Կենտրոն եւ Նորք-Մարաշ վարչական շրջանների դատախազության ավագ դատախազի պաշտոնին:

Գլխավոր դատախազի մեկ այլ հրամանով՝ Գեղարքունիքի մարզի դատախազության դատախազ, երրորդ դասի խորհրդական Հրանտ Մուրադյանը, իր դիմումի համաձայն, ազատվել է զբաղեցրած պաշտոնից:

ԿՔՆՆԱՐԿԵՆ

ՀԱՅԱՍՏԱՆԸ ՍՏԱՑԵԼ Է ԱՌԱՋԱՐԿՆԵՐ

Չի բացառվում, որ մինչեւ տարեվերջ տեղի ունենա Նիկոլ Փաշինյան- Իլհամ Ալիեւ եւս մեկ հանդիպում: Երեկ խորհրդարանում այս մասին հայտարարեց ՀՀ Ազգային ժողովի արտաքին հարաբերությունների հանձնաժողովի նախագահ Էդուարդ Աղաջանյանը: Պատգամավոր Էդուարդ Աղաջանյանը նշեց, թե Երեւանը ստացել է Բաքվի առաջարկների 3-րդ փաթեթը, եւ այժմ ընթանում է քննարկումների 3-րդ փուլը:

«Այո, ճիշտ է՝ հայկական կողմը ստացել է Ադրբեջանի առաջարկները, որոնք, ըստ էության, արձագանք են հայկական կողմի առաջարկների, բայց, այո, ճիշտ է՝ հայկական կողմը ստացել է Ադրբեջանից պատասխան առաջարկները: Իսկ ինչ վերաբերում է երկրների ղեկավարների կամ արտաքին գործերի նախարարների մակարդակով հնարավոր հանդիպմանը նախքան տարեվերջ, կարծում եմ, այո, չի կարելի բացառել», - ընդգծեց Աղաջանյանը:

Նշենք, որ մեկ օր առաջ տեղի է ունեցել Ռուսաստանի Դաշնության արտաքին գործերի նախարար Սերգեյ Լավրովի եւ Ադրբեջանի արտաքին գործերի նախարար Ջեյհուն Բայրամովի հանդիպումը, որից հետո երկու կողմերը հանդես էին եկել նաեւ մամուլի համար հայտարարություններով: Հենց այդ ժամանակ էլ Ադրբեջանի արտաքին գործերի նախարար Ջեյհուն Բայրամովը նշել էր, որ հայկական կողմի ներկայացրած առաջարկները Բաքվի համար ընդունելի չեն եղել, հետեւաբար Ադրբեջանն իր կողմից նոր առաջարկներ է ուղարկել: Ըստ Բայրամովի՝ հայկական կողմն առաջարկները վերածել է բազմաշերտ շրջանակային համաձայնագրի, իսկ Բաքուն ցանկանում է ստորագրված փաստաթղթի տեսքով որեւէ հիմք ունենալ առաջ շարժվելու համար, եւ անիրատեսական է համարում կարճ ժամանակում հարցերի բարդ փաթեթ համաձայնեցնելը:

Ռուսաստանի արտգործնախարար Սերգեյ Լավրովն էլ այդ նույն հանդիպումից հետո կրկին նկատեց, թե Պրահայում ձեռք բերված բանակցություններից հետո Մոսկվայի գործը հեշտացել է, քանի որ «Պրահայում կողմերը իրենք հայտնեցին, որ մտադիր են բոլոր խնդիրները լուծել՝ ՄԱԿ-ի կանոնադրության ու 1991 թվի Ալմա-Աթայում ստորագրված հռչակագրի հիման վրա»: Ըստ Ռուսաստանի արտգործնախարարի՝ Մոսկվան առաջարկել եւ փորձել է առկախել Ղարաբաղի կարգավիճակի հարցը, իսկ հիմա, փաստորեն, Հայաստանի ու Ադրբեջանի առաջնորդները տրամագծորեն այլ բան են պայմանավորվել: Ինչպես հայտնի է, Հայաստանի, Ադրբեջանի, Ֆրանսիայի ու Եվրոպական խորհրդի ղեկավարները համատեղ հայտարարություն են ընդունել՝ երկու կարեւոր արձանագրմամբ: Նախ՝ Բաքուն եւ Երեւանը ճանաչում են միմյանց տարածքային ամբողջականությունն ու ինքնիշխանությունը՝ հանձնառություն հայտնելով ՄԱԿ-ի կանոնադրությանն ու Խորհրդային Միության փլուզումից հետո Ալմա-Աթայում 1991-ին ստորագրված հռչակագրին: Կողմերն ընդգծում են, որ սահմանազատումը կայանալու է հենց այդ հիմքով: Բացի այդ, Հայաստանը համաձայնել է Եվրամիության քաղաքացիական առաքելություն տեղակայել Ադրբեջանի հետ սահմանի երկայնքով, Ադրբեջանը համաձայնել է համագործակցել այնքանով, որքանով որ առնչություն կունենա դրա հետ:

Երեկ՝ մամուլի ասուլիսի ժամանակ, Էդուարդ Աղաջանյանն անդրադարձավ նաեւ Սերգեյ Լավրովի հայտարարություններին. «Հարցի էությունը, ինչպես եւ ի սկզբանե Հայաստանի դիրքորոշումն է եղել, ժողովուրդների, իրավունքների եւ տվյալ պարագայում արցախցիների ինքնորոշման իրավունքի շրջանակում է եղել: Եվ փորձում ենք հենց փաստերի ու փաստարկների լեզվով հնարավորինս ապացուցողական տվյալներ ներկայացնել այն մասին, թե ինչու է մշտապես եւ մասնավորապես այս պահի դրությամբ կարեւոր արցախցիների հենց գոյութենական խնդրի վերհանումը եւ դրա մասին մեր գործընկերներին ներկայացումը», - ընդգծեց Աղաջանյանը:

Ալմա-Աթայում ստորագրված հռչակագրին հղում կատարելը որեւէ առնչություն չունի Լեռնային Ղարաբաղի խնդրի հետ. վստահեցնում են իշխող խմբակցության պատգամավորները՝ ավելացնելով, թե հակառակ դեպքում կստացվեր, որ ԼՂ հիմնախնդիրը տարածքային վեճ է, ինչպես պնդում է Բաքուն:

ՆԱԻՐԱ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

ՕՐՎԱ ԽՃԱՆԿԱՐ

ԵՐԿԿՈՂՄ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ

ՀՀ պետական եկամուտների կոմիտեի նախագահ Ռուստամ Բադասյանն Ամերիկայի Միացյալ Նահանգներ կատարած աշխատանքային այցի շրջանակում հանդիպում է ունեցել Միջազգային անվտանգության հարցերով պետքարտուղարի օգնական Էլիոթ Քանգի հետ:

Հանդիպման ընթացքում քննարկվել են երկկողմ համագործակցության մի շարք հարցեր: Մասնավորապես, կարեւորվել է մաքսային ոլորտում Պետական եկամուտների կոմիտեի եւ ԱՄՆ տարբեր գերատեսչությունների համագործակցության ամրապնդումը: Կողմերն անդրադարձել են նաեւ Արտահանման վերահսկման եւ հարակից սահմանային անվտանգության ծրագրի (EXBS) շրջանակում համագործակցության ընդլայնմանն ուղղված հարցերին:

Կողմերը պատրաստակամություն են հայտնել բարձր մակարդակի հանդիպումները դարձնել շարունակական երկու երկրների մաքսային ծառայության ոլորտներին առնչվող ընթացիկ խնդիրներին արագ լուծումներ տալու նպատակով:

ՀԱՆԴԻՊՈՒՄ՝ ՎԱՇԻՆԳՏՈՆՈՒՄ

Մարդու իրավունքների պաշտպանը Վաշինգտոնում հանդիպել է ԱՄՆ Պետքարտուղարի Եվրոպական ու Եվրասիական հարցերով փոխտեղակալ Էրիկա Օլսոնի հետ:

Փոխտեղակալ Օլսոնը նշել է, որ իրենք շարունակում են աշխատել բազմաթիվ հումանիտար հարցերի լուծման ուղղությամբ, այդ թվում՝ ռազմագերիների վերադարձի, անհետ կորած անձանց ճակատագրերի պարզման եւ այլն:

Քրիստիննե Գրիգորյանը փոխտեղակալին ներկայացրել է Պաշտպանի հաստատության արտահերթ զեկույցները, որոնցում փաստագրել ու վերլուծել են սեպտեմբերի 13-14-ին ադրբեջանական հարձակման ընթացքում ու դրանից հետո տեղի ունեցած մարդու իրավունքների շարունակական խախտումները, հարձակման ենթարկված համայնքներում ապրող մարդկանց հումանիտար խնդիրները, պատերազմական հանցագործության այն փաստերը, որոնք Պաշտպանի աշխատակազմը հաստատել է հատուկ մեթոդաբանությամբ, ինչպես նաեւ հայերնադարձված ռազմագերիների վկայությունների հիման վրա կատարված հետեւությունները Ադրբեջանում իրենց պահման ընթացում խոշտանգումների ու անմարդկային վերաբերմունքի փաստերի մասին:

Պաշտպանը կարեւորել է կատարված հանցանքների համար պատասխանատուների պատասխանատվության ու պատժի անխուսափելիության հարցը՝ անկախ նրանից, թե ինչ ազգություն ունի հանցագործը:

ԿԱՆԽՎԵԼ Է

ԱՆՕՐԻՆԱԿԱՆ ՄԻԳՐԱՑԻԱ ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼՈՒ ԴԵՊՔ

ՀՀ ազգային անվտանգության ծառայության Երեւանի քաղաքային վարչությունում ստացված օպերատիվ տեղեկություններով՝ վարչության եւ քննչական դեպարտամենտի ծառայողների համատեղ նախապատրաստած եւ տակտիկապես իրականացրած օպերատիվ-հետախուզական միջոցառումների ու վարութային գործողությունների արդյունքում պարզվել է, որ Ա.Ք-ն, հանդիսանալով ՀՀ-ում գործող «Մուայ Թայ» ֆեդերացիայի նախագահը, 2022 թվականի օգոստոս-նոյեմբեր ամիսների ընթացքում շահադիտական նպատակով, երկու եւ ավելի անձանց անօրինական միգրացիան կազմակերպելու դիտավորությամբ նախնական համաձայնության է եկել վարույթով դեռեւս չպարզված անձանց հետ, որից հետո, պայմանավորվածության համաձայն, խմբի անդամներով, փոխլրացնելով միմյանց գործողությունները, նախապես կատարելով դերերի բաշխում, Հայաստանի Հանրապետության մի շարք քաղաքացիներից 3400-7000 ԱՄՆ դոլար գումարներ ստանալու դիմաց, կազմակերպել են հիշյալ անձանց ՀՀ-ից ելքի, օտարերկրյա համապատասխան պետություններ մուտքի, իսկ այնուհետեւ՝ նաեւ այդ պետություններում գտնվելու գործընթացը:

Մասնավորապես, վերջիններս, «Շենգենյան համաձայնության երկրների» մուտքի պատշաճ թույլտվություն ստանալու նպատակով վերը նշված անձանց վերաբերյալ ՀՀ-ում գտնվող իրավասու մարմիններ ներկայացնելով իրավաբանական նշանակություն ունեցող փաստեր հավաստող եւ իրավունք վերապահող կեղծ փաստաթղթեր՝ «Մուայ Թայ» ֆեդերացիայի մարզիկ կամ մարզիչ հանդիսանալու, աշխատավայրի, աշխատավարձի չափի, բանկային հաշիվների, եկամուտների, ինչպես նաեւ բովանդակությամբ ակնհայտ կեղծ՝ իրականությանը չհամապատասխանող այլ տեղեկություններ պարունակող տեղեկանքներ, այդ կերպ խմբի կազմում նախնական համաձայնությամբ կազմակերպել են մի շարք անձանց անօրինական միգրացիան:

Նախաքննության ընթացքում քրեական վարույթի շրջանակներում անօրինական միգրացիայի կազմակերպմամբ զբաղվող հանցավոր խմբի անդամի բնակարանում, ավտոմեքենայում, ինչպես նաեւ «Մուայ Թայ» ֆեդերացիայի գրասենյակում կատարված խուզարկությունների արդյունքում հայտնաբերվել եւ վերցվել են բազմաթիվ կեղծված փաստաթղթեր, փաստաթղթերի դատարկ ձեւանմուշներ, ինչպես նաեւ քրեական վարույթի համար նշանակություն ունեցող այլ տվյալներ:

Նախաքննության ընթացքում հանցավոր խմբի անդամներից մեկն անմիջականորեն ծագած հիմնավոր կասկածով ձերբակալվել է, եւ քրեական վարույթով ձեռք բերված փաստական տվյալների հիման վրա հսկող դատախազի կողմից որոշում է կայացվել վերջինիս նկատմամբ՝ խմբի կազմում անօրինական միգրացիայի կազմակերպման համար ՀՀ քրեական օրենսգրքի համապատասխան հոդվածներով հանրային քրեական հետապնդում հարուցելու մասին: Նրա նկատմամբ որպես խափանման միջոց է կիրառվել կալանքը:

Քրեական վարույթով նախաքննությունը շարունակվում է, իրականացվում են քննչական անհրաժեշտ գործողություններ եւ օպերատիվ-հետախուզական միջոցառումներ՝ դեպքի բոլոր հանգամանքները, հանցավոր արարքներում ներգրավված անձանց ամբողջական շրջանակը պարզելու եւ նրանց նկատմամբ քրեաիրավական ներգործության միջոցներ կիրառելու համար:

ԲԱՑԱՀԱՅՏՎԵԼ ԵՆ

ՉՈՐՍ ՏԱՄՆՅԱԿԻՑ ԱՎԵԼԻ ԳՈՂՈՒԹՅԱՆ ԴԵՊՔԵՐ

ՀՀ քննչական կոմիտեի Արմավիրի մարզային քննչական վարչությունում իրականացված մեծածավալ քննչական եւ վարութային գործողությունների, ինչպես նաեւ օպերատիվ-հետախուզական միջոցառումների արդյունքում բացահայտվել է չորս տասնյակից ավել գողության, գողության փորձի դեպք: Քննությամբ պարզվել է, որ Արմավիրի մարզի 28-ամյա բնակիչը, խմբի կազմում ուրիշի գույքի գաղտնի հափշտակություն կատարելու դիտավորությամբ, նախնական համաձայնության գալով այլ անձանց հետ, 2021-2022թթ. ընթացքում գնացել է մարզի Էջմիածին եւ Արմավիր քաղաքների, ինչպես նաեւ նույն մարզի մի շարք գյուղերի (Արալույս, Երասխահուն, Վարդաշեն, Մարգարա, Լեռնամերձ, Արազապ, Արգավանդ, Տանձուտ, Արեւիկ, Արալույս, Ջրառատ, Փշատավան, Հացիկ, Ոսկեհաս, Ալաշկերտ, Սարդարապատ, Մրգաշատ, Հայթաղ, Գեղակերտ, Հովտամեջ, Մրգաստան, Ակնալիճ, Առատաշեն, Արշիմեդ, Եղեգնուտ) հարակից դաշտերում գտնվող՝ տարբեր ՋՕ ընկերությունների պատկանող խորքային հորերի ենթակայաններ, դաշտերում տեղակայված հակակարկտային կայաններ եւ կատարել մալուխների, էլեկտրական մարտկոցների, տրանսֆորմատորների յուղի հափշտակություն՝ ընկերություններին եւ անհատ անձանց պատճառելով տարբեր չափերով գույքային վնաս:

Որոշ դեպքերում 28-ամյա տղամարդը միայնակ է մուտք գործել նույն մարզում գտնվող այլ խորքային հորերի ենթակայաններ, սակայն իր կամքից անկախ պատճառներով հանցագործությունն ավարտին չհասցնելով՝ հեռացել է:

Բացի այդ, վերջինս, իր ծանոթի հետ նախնական համաձայնության գալով, Արմավիր քաղաքի տարբեր փողոցներում տեղակայված բազմաթիվ սրճեփ սարքերը վնասելով, հափշտակել են տարբեր չափերի գումարներ, որոշ դեպքերում էլ՝ իրենց կամքից անկախ հանգամանքներով հանցանքն ավարտին չեն հասցրել: Արմավիրի մարզի 28-ամյա բնակչի նկատմամբ հարուցվել է հանրային քրեական հետապնդում, ինչի հիման վրա վարույթն իրականացնող մարմնի կողմից նրան առաջադրվել է մեղադրանք՝ մինչեւ սույն թվականի հուլիսի 1-ը գործող ՀՀ քրեական օրենսգրքի 177-րդ հոդվածի 1-ին մասով (5 դրվագ), 177-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետով (13 դրվագ), 34-177-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետով (5 դրվագ), 177-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին եւ 3-րդ կետերով (5 դրվագ) եւ գործող ՀՀ քրեական օրենսգրքի 254-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետով (15 դրվագ):

Նշված քրեական վարույթի շրջանակներում եւս 4 անձի նկատմամբ, որպես համակատարողներ, հարուցվել է քրեական հետապնդում: Նախաքննությունը շարունակվում է: Ձեռնարկվում են միջոցառումներ դեպքի բոլոր հանգամանքները եւ հնարավոր այլ անձանց ներգրավվածությունը պարզելու, յուրաքանչյուրի գործողություններն անհատականացնելու եւ քրեաիրավական գնահատական տալու ուղղությամբ:

ԼՈՒՐԵՐ

ՄԵՂԱԴՐԱՆՔ՝ ԲԱԺՆԻ ՎԱՐԻՉԻՆ

ArmLur.am-ին հայտնի դարձավ, որ Դավիթ Սպարտակի Գրիգորյանին մեղադրանք է առաջադրվել այն բանի համար, որ նա, 2012-2019 թվականների ընթացքում հանդիսանալով առեւտրային կազմակերպության՝ ՀՀ ԱՆ «Այրվածքաբանության ազգային կենտրոն» ՓԲԸ-ի կլինիկական-ախտորոշիչ լաբորատորիայի բաժնի վարիչը եւ օժտված լինելով կարգադրիչ լիազորություններով, իր լիազորությունները ծառայության շահերին հակառակ եւ այլ անձանց օգտին օգտագործելու միասնական դիտավորությամբ հանձնարարել է իր ենթակայության ներքո գտնվող լաբորատորիայի աշխատակիցներին կատարել մի շարք անձանց լաբորատոր հետազոտություններ, որոնց դիմաց պարտադիր վճարման ենթակա ընդհանուր 522.500 ՀՀ դրամ գումարը չի վճարել դրամարկղ, ինչի հետեւանքով ՀՀ ԱՆ «Այրվածքաբանության ազգային կենտրոն» ՓԲԸ-ին պատճառվել է էական վնաս:

ԱԶԱՏ Է ԱՐՁԱԿՎԵԼ

ArmLur.am-ը գրել էր, որ Երեւանում՝ Մուրացան 109 հասցեից ոստիկանության Էրեբունու բաժին բերման էին ենթարկվել մեկ տասնյակից ավելի անձինք: Բերման ենթարկվածների մեջ է եղել «օրենքով գող» Պզոն՝ Արմեն Ղազարյանը, այլ անձինք եւս, որոնցից մեկը հայտնի է որպես «կաբելի տղա», որը շուտով պետք է «գող» կարգվեր:

ArmLur.am-ը գրել էր, որ «օրենքով գող» Պզոն՝ Արմեն Ղազարյանը, կալանավորվել էր. դատարանի որոշմամբ նա ազատ է արձակվել, եւ կալանավորման որոշումը վերացվել է: Այս մասին մեզ հետ զրույցում հայտնեց Արմեն Մելքոնյանը:

ԾԵԾԵԼ ԵՆ ՏԱՆ ԱՆԴԱՄՆԵՐԻՆ

Դեկտեմբերի 5-ին՝ ժամը 01.05-ին, ոստիկանության օպերատիվ կառավարման կենտրոն զանգած քաղաքացին հայտնել էր, որ հարձակվել են հորաքրոջ տան վրա: Զանգից քիչ անց երկրորդ ահազանգն է ստացվել. օպերատիվ կառավարման կենտրոն զանգած կինը հայտնում էր, որ մեքենաներով շրջապատել են իրենց տունը: Ջրվեժ գյուղի նշված հասցե է մեկնել ոստիկանության Գառնիի բաժանմունքի օպերատիվ խումբը: Տանտիրուհին հայտնել է, որ դեկտեմբերի 5-ի ժամը 01.00-ից ժամը 01.30-ն ընկած ժամանակահատվածում ոմն Գուրգեն ընկերների հետ հարձակվել են իրենց տան վրա, ծեծի են ենթարկել տան անդամներին, իսկ նրանցից մեկը դանակով խփել է տանտիրոջ ձեռքին՝ պատճառելով մարմնական վնասվածք: Ձեռնարկված միջոցառումների արդյունքում պարզվել է Գուրգենի եւ ընկերների ինքնությունը: Աշտարակ քաղաքի 36-ամյա, 24-ամյա, 29-ամյա եւ 28-ամյա չորս բնակիչները հայտնաբերվել, ձերբակալվել եւ, «Օպել Զաֆիրա» մակնիշի մեքենայով հանդերձ, տեղափոխվել են ոստիկանության Կոտայքի բաժին: Կազմված փաստաթղթերը եւ բերման ենթարկվածները ներկայացվել են Աբովյանի քննչական բաժին:

● *Ըստ ոստիկանության տվյալների՝ դեկտեմբերի 5-ից 6-ը Հայաստանի Հանրապետությունում բացահայտվել է հանցագործության 55 դեպք, որոնցից 1-ը՝ նախկինում կատարված:*

ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

ՄԱՐՁ

ՊԱՐԳԵՎԱՏՐՈՒՄՆԵՐԸ ՉԻ ՀՐԱՊԱՐԱԿՎՈՒՄ

Վարչապետ Նիկոլ Փաշինյանի դասընկեր, նրա հարսանիքի քավոր, Նիկոլ Փաշինյանի որոշումներով 2019թ. սեպտեմբերի 12-ին Իջեւան համայնքի ղեկավարի պաշտոնակատար, 2021թ. ապրիլի 8-ին Տավուշի մարզպետ նշանակված Հայկ Ղալումյանին «Ժողովուրդ» օրաթերթի անունից տեղեկատվական հարցում է ուղարկվել, եւ հարցման մեջ ներառված էր այն հարցը, թե պետական բյուջեից Տավուշի մարզպետարանի աշխատողների պարգեւատրումների վերաբերյալ իր կայացրած որոշումները ինչու չեն հրապարակվում Տավուշի մարզպետարանի ինտերնետային կայքում:

Մարզպետարանից ստացված պատասխանում նշված էր. «Պարգեւատրումների վերաբերյալ որոշումները չեն հրապարակվում, քանի որ դրանք պարունակում են աշխատողներին վերաբերող անձնական տվյալներ՝ նրանց եկամուտների մասին»: Տավուշի նախկին մարզպետների պաշտոնավարման ժամանակ մարզպետարանի աշխատողների պարգեւատրումների մասին մարզպետների որոշումները հրապարակվում էին Տավուշի մարզպետարանի ինտերնետային կայքում. այդ որոշումներում նշվում էր, որ մարզպետարանի թվով այսքան աշխատողներ պարգեւատրվում են ընդհանուր այսքան գումարի չափով, պարգեւատրվողների ցանկը՝ որոշման հավելվածում, հավելվածն էլ փակ էր լինում: Այսինքն՝ մարզպետարանի աշխատողների եկամուտների մասին անձնական տվյալներ չէին հրապարակվում: Իրականում Տավուշի մարզպետ Հայկ Ղալումյանը պետբյուջեից իրեն եւ մարզպետարանի աշխատողներին պարգեւատրելու մասին իր որոշումները մարզպետարանի ինտերնետային կայքում չի հրապարակում, որովհետեւ գիտի, որ սահմանամերձ, աղքատ մարզում պետբյուջեից մարզպետարանի պաշտոնյաների ճոխ պարգեւատրումների մասին տեղեկատվությունը հանրության կողմից վատ է ընդունվում:

Մարզպետ Հայկ Ղալումյանին նաեւ «Ժողովուրդ» օրաթերթը գրավոր հարցում է արել, թե 2022թ. նոյեմբերի 25-ի դրությամբ Տավուշի մարզի սոցիալապես անապահով, աջակցության կարիք ունեցող բնակիչները 2022 թվականին Տավուշի մարզպետարանի միջոցով պետական բյուջեից որքան գումարի դրամական օգնություն են ստացել, 2022թ. նոյեմբերի 25-ի դրությամբ Տավուշի մարզպետարանի աշխատակիցները պետական բյուջեից ընդհանուր առմամբ որքան գումարի պարգեւատրումներ են ստացել: Մարզպետարանից ստացված պատասխանում նշված է, որ սոցիալական աջակցության գումարներից նոյեմբերի 25-ի դրությամբ տրամադրվել է 66,3 միլիոն դրամ (բյուջեով նախատեսված է 80 միլիոն դրամ), Տավուշի մարզպետարանի թվով 76 աշխատակից ՀՀ պետական բյուջեով նախատեսված 59,5 միլիոն դրամից 2022թ. նոյեմբերի 25-ի դրությամբ ստացել է 49,5 միլիոն դրամի պարգեւատրում:

ՈՍԿԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ
Տավուշ

ՆԱԽԱԳԻԾ

ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆԻՑ ԱԶԱՏՎԵԼՈՒ ՄԻՔՈՑ

Արցախի Հանրապետության Ազգային ժողովում շրջանառության մեջ է դրվել ««Զինվորական ծառայության եւ զինծառայողի կարգավիճակի մասին» օրենքում փոփոխություն կատարելու մասին» օրենքի նախագիծը, ըստ որի՝ նախատեսվում է պարտադիր զինվորական ծառայությունից ազատվելու հնարավորություն տալ նաեւ 44-օրյա պատերազմում զոհված զինծառայողների եղբայրներին:

Ըստ օրինագծի հիմնավորման՝գործող օրենքը, բացի ծառայության ընթացքում զոհված ծնող, եղբայր կամ քույր ունենալը, զինծառայությունից ազատվելու պարտադիր պայման է սահմանում նաեւ ընտանիքի միակ արու զավակ լինելը: Կան 44-օրյա պատերազմում եւ դրանից հետո Արցախի տարածքում ծավալված մարտական գործողությունների հետեւանքով զոհված զինծառայողների կրտսեր եղբայրներ, որոնք ենթակա են պարտադիր զինվորական ծառայության, քանի որ ընտանիքի միակ արու զավակը չեն:

Օրենքի նախագծում, անդրադարձ կատարելով ընթացիկ իրավիճակին եւ խնդիրներին, նշվում է, որ 44-օրյա պատերազմում զոհված զինծառայողների ծնողները գտնվում են ծանր հոգեբանական եւ սոցիալական վիճակում եւ չեն ցանկանում իրենց կրտսեր որդուն եւս ուղարկել զինվորական ծառայության, եւ այդ հողի վրա 2022 թվականի զորակոչի ընթացքում հասարակության շրջանում բարձրացված դժգոհության ալիքը Արցախի Հանրապետությունում եւ Հայաստանի Հանրապետությունում «Զինվորական ծառայության եւ զինծառայողի կարգավիճակի մասին» օրենքների 21-րդ հոդվածում պարտադիր զինվորական ծառայությունից ազատվելու հիմք հանդիսացող եւ իրարից տարբերվող մոտեցումների պատճառով անհրաժեշտություն է դարձրել պարտադիր զինվորական ծառայությունից ազատվելու հնարավորություն տալ նաեւ այդ ընտանիքների անդամներին:

Բնագավառում իրականացվող քաղաքականության նպատակն է ընդառաջել հասարակության կողմից բարձրացված պահանջին եւ, Արցախի Հանրապետության Սահմանադրության պահանջներին համահունչ, պատշաճ ապահովել զինվորական ծառայության նախապատրաստման, կազմակերպման եւ իրականացման, զինծառայողների եւ նրանց ընտանիքների իրավական ու սոցիալական երաշխիքների իրացման գործընթացը, ամրապնդել «Ազգ-Բանակ» գաղափարախոսությունը եւ դրա շրջանակներում իրականացվող ծրագրերը: Օրենքի 21-րդ հոդվածի 5-րդ մասի կարգավորիչ հարաբերության փոփոխմամբ եւ «Զինվորական ծառայության եւ զինծառայողի կարգավիճակի մասին» ՀՀ օրենքի հետ համապատասխանեցմամբ՝ ակնկալվում է ապահովել զորակոչի պատշաճ կազմակերպման եւ իրականացման հետ կապված հարաբերությունները:

Ինչպես տեղեկացրել են Արցախի Հանրապետության Ազգային ժողովից, ««Զինվորական ծառայության եւ զինծառայողի մասին» օրենքում փոփոխություն կատարելու մասին» օրենքի նախագծի քննարկումը, Արցախի Պաշտպանության նախարարի տեղակալ Ս. Առուստամյանի զեկուցմամբ, ընդգրկված է Արցախի ԱԺ պաշտպանության, անվտանգության եւ օրինապահպանության հարցերի մշտական հանձնաժողովի դեկտեմբերի 7-ի նիստի օրակարգում:

Հարակից զեկուցողն է ԱԺ պաշտպանության, անվտանգության եւ օրինապահպանության հարցերի մշտական հանձնաժողովի նախագահ Սեյրան Հայրապետյանը:

ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԻԾ

ՏՐԱՄԱԴՐՈՒՄԸ ԿԴԱԴԱՐԵՑՎԻ

Հայաստանում նախատեսվում է 2023 թվականի հունվարի 1-ից մինչեւ 2024 թվականի հունվարի 1-ը դադարեցնել կենսաչափական անձնագրերի տրամադրումը քաղաքացիներին մինչեւ ապագա սերնդի տեխնոլոգիաներով եւ անվտանգության դայմաններով օժտված կենսաչափական անձնագրերի ստեղծումն ու աստիճանաբար հին անձնագրերը նորերով փոխարինելը:

«Հայաստանի Հանրապետության քաղաքացու անձնագրի մասին» օրենքում փոփոխություններ եւ լրացում կատարելու մասին եւ կից ներկայացված օրենքների նախագծերի փաթեթն ԱԺ նիստում ներկայացրեց ՀՀ փոխոստիկանապետ Արա Ֆիդանյանը:

«Օրինագծերի նախապատրաստումը պայմանավորված է ՀՀ կառավարության՝ 1998 թվականի դեկտեմբերի 25-ի համապատասխան որոշմամբ նախատեսված անձնագրերի տրամադրման ժամկետը մինչեւ 2023 թվականի դեկտեմբերի 31-ը սահմանելու անհրաժեշտությամբ՝ՀՀ քաղաքացիների անձը հաստատող փաստաթուղթ ունենալու իրավունքը երաշխավորելու համար: Բացի այդ, օրինագծերի նպատակը քաղաքացիների համար ապագա սերնդի տեխնոլոգիաներով եւ անվտանգության պայմաններով օժտված կենսաչափական անձնագրերի եւ էլեկտրոնային նույնականացման ու ստորագրության հնարավորության ստեղծումն է եւ աստիճանաբար, ըստ ժամկետի ավարտի, հին անձնագրերի եւ էլեկտրոնային քարտերի՝ նորերով փոխարինումը»,-ասաց Ֆիդանյանը:

Նախատեսվում է, ՀՀ կառավարության 1998 թվականի դեկտեմբերի 25-ի համապատասխան որոշմամբ, անձնագրերի տրամադրման ժամկետը երկարաձգել մինչեւ 2023 թվականի դեկտեմբերի 31-ը, իսկ նույնականացման քարտերը տրամադրել առանց էլեկտրոնային պահոցի մինչեւ ՀՀ կառավարության որոշմամբ դրանց բնութագիր սահմանումը: Էլեկտրոնային պահոցով նույնականացման քարտերը նախատեսվում է տրամադրել մինչեւ 2023 թվականի փետրվարի 15-ը, իսկ էլեկտրոնային պահոց չպարունակող նույնականացման քարտերը՝ 2023 թվականին փետրվարի 15-ից:

«Բացի այդ, ժամանակավորապես՝ մինչեւ 2024 թվականի հունվարի 1-ը, կդադարեցվի ՀՀ քաղաքացիներին կենսաչափական անձնագրերի տրամադրումը մինչեւ ապագա սերնդի տեխնոլոգիաներով եւ անվտանգության պայմաններով օժտված կենսաչափական անձնագրերի ստեղծումն ու աստիճանաբար հին անձնագրերի՝ նորերով փոխարինումը»,-ասաց փոխոստիկանապետը:

● *Անցած 1 օրվա ընթացքում Հայաստանի Հանրապետությունում արձանագրվել է 11 ՃՏՊ. 17 մարդ ստացել են տարբեր աստիճանի մարմնական վնասվածքներ:*

ԼՈՒՐԵՐ

ՆՈՐ ՇԵՆՔԵՐ՝ «ԱԿԲԱ»-Ի ՕԳՆՈՒԹՅԱՄԲ

Գյումրու «Մուշ-2» թաղամասի բնակելի երկու նոր շենքերը գրեթե պատրաստ են շահագործման. 36 բնակարանի նոր շահառուները երկրաշարժից հետո տնակներում բնակվող քաղաքացիներն են:

Եվս երկու շենք կառուցման փուլում են. 44-օրյա պատերազմից հետո որոշվեց այս նոր մասնաշենքերում բնակարաններ տրամադրել նաեւ պատերազմի մասնակից եւ հաշմանդամություն ձեռք բերած տղաներին: Շենքերը հարմարեցված կլինեն հաշմանդամություն ունեցող անձանց:

«Հայաստան» համահայկական հիմնադրամի գործընկերները «Ակբա» բանկն ու Visa «ԲԱՐԵՐԱՐ» քարտապաններն են: Շենքերի կառուցման համար բանկն իր շահույթից տրամադրել է 100 միլիոն ՀՀ դրամ:

«Շենքերը կայուն են, կառուցված են միաձույլ երկաթբետոնե կոնստրուկցիայով: Շենքերի տանիքը թեք է, որն ինքնանպատակ չէ. տեղադրվել են արեւային պանելներ, իսկ թեքությունը համապատասխանում է արեւային պանելին: Բնակարանները կահավորված են, շենքերն ամբողջությամբ պատրաստ են: Ծրագրում ունենք եւս երկու շենք, որ պետք է կառուցենք՝ 7 ու 9 հարկանի: Այս շենքերը հարմարեցված են հաշմանդամություն ունեցող անձանց, գործելու են վերելակներ: Այս շենքերը 58 բնակարան կունենան»,- նշում է «Հայաստան» համահայկական հիմնադրամի շինարարության պատասխանատու, շինարար խորհրդատու Արմեն Ղազարյանը:

Նորակառույց շենքերն ունեն նաեւ հատուկ տարածք ստեղծագործելու համար: Արվեստի սիրահարները կարող են ոգեշնչում փնտրել եւ առանձնանալ նորակառույցների տանիքում, որը նախագծվել է հատուկ նրանց համար:

2012-ին «Ակբա» բանկը «Հայաստան» համահայկական հիմնադրամի հետ Հայաստանում առաջին անգամ թողարկեց բարեգործական Visa «ԲԱՐԵՐԱՐ» քարտը: Ծրագրի շրջանակում բանկը հիմնադրամի հատուկ հաշվեհամարին իր շահույթից փոխանցում է «Visa «ԲԱՐԵՐԱՐ» քարտով կատարված բոլոր վճարային գործարքների գումարի 0.1%-ը, ինչպես նաեւ քարտի սպասարկման վարձի 50%-ը:

Բանկը վերահսկվում է ՀՀ ԿԲ կողմից:

ԱՆՊՏՂՈՒԹՅԱՆ ՀԱՊԹԱՀԱՐՈՒՄ

2022 թվականին Հայաստանում անպտղության հաղթահարման պետական ծրագրով 103 երեխա է ծնվել: 2019-20 թվականներին անպտղության հաղթահարման ծրագրով գրանցվել է 63 հղիություն, ծնվել է 43 երեխա, 2021-ին՝214 հղիություն, 76 երեխա: Ծրագրի շահառու կարող են դառնալ զույգերը, որոնցից մեկն ունի հաշմանդամություն կամ զինծառայող է, նրան հավասարեցված անձ, եթե անապահովության 28 եւ ավելի միավոր ունեցող ընտանիք է, զոհված զինծառայողի ծնող կամ սահմանամերձ 186 համայնքներից մեկի բնակիչ: Զոհված զինծառայողների ծնողների դեպքում կարող են շահառու դառնալ մինչեւ 42 տարեկան կանայք, մյուս դեպքերում՝ մինչեւ 36 տարեկան կանայք: Նախորդ տարվանից այս ծրագրի շահառու են նաեւ 44-օրյա պատերազմում զոհվածների ծնողները:

ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆ

ԳՆԱՃԻ ՏԵՄՊԵՐԸ՝ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

Ընթացիկ տարվա նոյեմբերին, նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ, ՀՀ սպառողական շուկայում գնաճը կազմել է 8.8%, իսկ նախորդ ամսվա համեմատ՝ 1.1%:

2022թ. նոյեմբերին, նախորդ տարվա նույն ամսվա համեմատ, Հայաստանում արձանագրվել է սննդամթերքի եւ ոչ ալկոհոլային խմիչքի 11.1%, իսկ 2022թ. հոկտեմբերի համեմատ՝ 2.4% գնաճ: Տավարի մսի գինը 2022թ. նոյեմբերին, 2021թ. նոյեմբերի համեմատ, աճել է 23.5%-ով, իսկ 2022թ. հոկտեմբերի համեմատ՝ 0.2%-ով: 2022թ. նոյեմբերին, նախորդ տարվա նույն ամսվա համեմատ, ՀՀ-ում գրանցվել է խոզի մսի 0.2% գնանկում, մինչդեռ թռչնամսի ու գառան մսի՝համապատասխանաբար 2.2% եւ 5.1% գնաճ:

Անդրադառնալով ոչ պարենային ապրանքների գներին՝ նշենք, որ ընթացիկ տարվա նոյեմբերին, նախորդ տարվա նույն ամսվա համեմատ, ոչ պարենային ապրանքների շուկայում արձանագրվել է 7.7%, իսկ 2022թ. հոկտեմբերի համեմատ՝ 0.5% գնաճ: Հատկանշական է, որ 2022թ. նոյեմբերին, հոկտեմբերի համեմատ, ՀՀ-ում արձանագրվել է բենզինի եւ դիզելային վառելիքի համապատասխանաբար 2.5% եւ 4.5% գնանկում: 2022թ. նոյեմբերին, 2021թ. նոյեմբերի համեմատ, գրանցվել է բենզինի 3.3% գնանկում, իսկ դիզելային վառելիքի՝23.9% գնաճ:

Դիտարկվող ժամանակահատվածում, նախորդ տարվա համեմատ, ավելի քան 7%-ով ավելացել են նաեւ ծառայությունների գները, իսկ նույն տարվա հոկտեմբերի համեմատ՝ 0.2%-ով: Ընթացիկ տարվա հունվար-նոյեմբեր ժամանակահատվածում ՀՀ սպառողական գների ինդեքսը (ՍԳԻ) կազմել է 8.7%:

Ընթացիկ տարվա հոկտեմբերին, նախորդ տարվա նույն ամսվա համեմատ, Եվրասիական տնտեսական միության (ԵԱՏՄ) երկրներում սպառողական գների ինդեքսն ավելացել է 13.4%-ով: Դիտարկվող ժամանակահատվածում ԵԱՏՄ անդամ երկրներում սպառողական գներն ավելացել են հետեւյալ կերպ՝

Հայաստանում՝ 9.5%,
Ռուսաստանում՝ 12.6%,
Բելառուսում՝ 15.2%,
Ղրղզստանում՝ 15.4%,
Ղազախստանում՝ 18.8%:

Ընթացիկ տարվա հոկտեմբերին, 2021թ. հոկտեմբերի համեմատ, սպառողական գների աճ է գրանցվել տարածաշրջանի երկրներում, մասնավորապես՝ Թուրքիայում՝ 85.4%, Վրաստանում՝ 10.6%, Ադրբեջանում՝ 15.6%: Նկատելի է, որ, ԵԱՏՄ եւ տարածաշրջանի երկրների համեմատ, Հայաստանում գնաճն ամենացածրն է (2022թ. հոկտեմբերին, 2021թ.-ի հոկտեմբերի համեմատ, գնաճը կազմել էր 9.5%):

Օրերս Եվրասիական զարգացման բանկը ներկայացրել էր 2023թ. համար ԵԱՏՄ անդամ երկրների մակրոտնտեսական ցուցանիշների կանխատեսումների վերաբերյալ զեկույցը, համաձայն որի՝ ակնկալվում է, որ 2023թ. տարեվերջին ԵԱՏՄ երկրների շարքում ամենացածր գնաճը կարձանագրվի Հայաստանում՝ 4.6 %-ի սահմաններում:

ԵԱԶԲ անդամ երկրների հիմնական մակրոտնտեսական ցուցանիշների կանխատեսումը 2023 թ.





ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՀՐԱՊԱՐԱԿԱՅԻՆ ԾԱՆՈՒՑՈՒՄ

«Բի էս Թի» ՍՊԸ-ն (այսուհետ՝Կազմակերպիչ) «Ակսոն» ԱՀ Բորսայի հարթակում իրականացնելու է բաց աճուրդ համապատասխան փուլերով՝ «դասական» (գնի բարձրացմամբ), այնուհետեւ «հոլանդական» (գնի նվազեցմամբ) եղանակներով: Աճուրդի ընթացքում վաճառվելու են «Արդշինբանկ» ՓԲԸ-ին (այսուհետ՝ բանկ) գրավի իրավունքով պատկանող հետեւյալ լոտերը.

- Լոռու մարզ, համայնք Ստեփանավան, Ստեփանավան ք., 4-րդ միկրոշրջան, 5-րդ փողոց, 9 հասցեում գտնվող 257.29 ք.մ. բնակելի տուն, 47.84 ք.մ. անասնաշենք եւ 0.0605 հա հողամաս: Լոտի մեկնարկային գինը՝ 17600000 ՀՀ դրամ:

- ք. Երեւան, Ավան, Ավան-Առինջ թաղամաս, 1-ին միկրոշրջան, 2/12 շենք, 28 հասցեում գտնվող 79,4 ք.մ. բնակարան: Լոտի մեկնարկային գինը՝34070000 ՀՀ դրամ:

Լոտերի նկատմամբ սահմանափակումները՝գույքերը գրավադրված են:

Աճուրդի փուլերը՝ք. Երեւան, Սայաթ-Նովա պողոտա, 40 շենք, թիվ 82/31 հասցեում 23.12.2022թ.-ին, ժ. 12:00-ին դասական եղանակով, այնուհետեւ յուրաքանչյուր աշխատանքային օր, նույն վայրում, նույն ժամին՝ հոլանդական եղանակով: Աճուրդի ավարտը՝ 23.01.2023թ.-ին: Աճուրդի մասնակցության նախավճարը սահմանված է համապատասխան գույքի ընթացիկ մեկնարկային գնի 1%-ի չափով, որի վճարման վերջնաժամկետը սահմանված է յուրաքանչյուր աճուրդի փուլի օրվան նախորդող աշխատանքային օրվա ժամը 16:00-ն: Նախավճարը վճարվում է «Բի էս Թի» ՍՊԸ -ի դրամարկղումաճուրդի կայացման հասցեում, ՀՀ օրենսդրությամբ սահմանված կանխիկի շեմը չգերազանցելու դեպքում, կամ բանկային հաշվին («Արդշինբանկ» ՓԲԸ-ում 2470103374150000 հաշվեհամարին) կամ կազմակերպչի կողմից տրված այլ հաշվեհամարին: Աճուրդին մասնակցելու համար անհրաժեշտ է ներկայացնել՝ ֆիզիկական անձանց համար անձը հաստատող փաստաթուղթ եւ Կազմակերպչի կողմից տրված մասնակցի վկայական (այսուհետ՝ աճուրդի վկայական), որը հաստատելու է նաեւ նախավճարի մուծման փաստը, իսկ իրավաբանական անձանց համար՝ կանոնադրությունը, իրավաբանական անձանց պետական գրանցման վկայականը, պաշտոնատար անձի կամ ներկայացուցչի լիազորությունները հաստատող փաստաթուղթ եւ աճուրդի վկայական:

Աճուրդում հաղթող է ճանաչվում այն անձը, ով առաջարկել է ամենաբարձր գինը: Վերջին ամենաբարձր գնային հայտ ներկայացրած մասնակիցը, աճուրդավարի մուրճիկի երրորդ հարվածից հետո, համարվում է աճուրդում հաղթած մասնակից: Աճուրդին մասնակցած, սակայն չհաղթած անձի մուծած նախավճարը վերադարձվում է աճուրդն ավարտվելուց հետո մեկ աշխատանքային օրվա ընթացքում: Նախավճարը ենթակա է վերադարձման, եթե աճուրդը համարվում է չկայացած: Եթե աճուրդում հաղթող ճանաչված անձը հրաժարվում է ստորագրել արձանագրությունը կամ առուվաճառքի պայմանագիրը, ապա նա կորցնում է իր մուծած նախավճարը: Եթե Կազմակերպիչը հրաժարվում է ստորագրել արձանագրությունը, ապա նա պարտավոր է աճուրդում հաղթող ճանաչված անձին վերադարձնել նախավճարը:

Նախքան աճուրդի ավարտն աճուրդային լոտի նկատմամբ բանկի գրավի կամ սեփականության իրավունքի դադարման հետեւանքով աճուրդի մասնակիցների կորուստների եւ վնասների համար բանկը որեւէ պատասխանատվություն չի կրում:

Լոտերն ուսումնասիրելու ցանկություն հայտնած անձինք կարող են սույն ծանուցման օրվան հաջորդող օրվանից մինչեւ աճուրդի ավարտը, յուրաքանչյուր աշխատանքային օր, ժ. 10:00-ից մինչեւ 18:00-ն, այցելել վերը նշված հասցեներով եւ ծանոթանալ լոտերի հետ՝ այցելությունը նախապես համաձայնեցնելով Կազմակերպչի հետ: Հարկային գործակալ հանդիսանալու դեպքում աճուրդում հաղթած մասնակցի կողմից լոտի գնի վճարելու կարգը սահմանվում է վաճառողի հետ՝ փոխհամաձայնեցված ժամկետներում: Սույն ծանուցումը կարող է փոփոխվել մամուլում հրապարակվելու միջոցով: Աճուրդների անցկացման կանոնակարգին կարող եք ծանոթանալ եւ անվճար ստանալ կանոնակարգի պատճենը, դիմելով Կազմակերպչին՝ ք. Երեւան, Սայաթ-Նովա պողոտա, 40 շենք, թիվ 82/31 հասցե: Բոլոր այլ տեղեկությունների համար կարող եք զանգահարել (011) 56-45-13 հեռախոսահամարով կամ այցելել www.llcbst.am, www.akson.am կայքերը:

«Ժողովուրդ» օրաթերթում եւ Armlur.am կայքում գովազդ, հայտարարություն, հաշվետվություն, ծանուցում տեղադրելու համար զանգահարել 094-455-456 հեռախոսահամարով:

ԿԱՐԾԻՔ

ՇԱՏ ՔՆՆԱՐԿՎՈՂ

ԻՆՉՈ՞Ւ Է ԱԿՏԻՎԱՑԵԼ ՀԱՄԱՑԱՆՑՈՒՄ

Չնայած երգչուհի Անգելինա Գասպարյանը պասիվ է հայկական երգարվեստում, բայց փոխարենը շատ ակտիվ է համացանցային տիրույթում: Երգչուհին ոչ միայն ակտիվ լուսանկարներ է հրապարակում եւ հետեւորդների հետ կիսվում իր առօրյայով, այլ նաեւ հաճախ է իր էջում կազմակերպում հարց ու պասախան եւ բավականին բուռն ձեւով է պասասխանում է իր ընտանիքին վերաբերող քննադատություններին:

Ի դեպ, հիշեցնենք, որ Անգելինա Գասպարյանը ՀՀ նախկին ոստիկանապետ Վլադիմիր Գասպարյանի դուստրն է:

Նշենք, որ Գլխավոր դատախազությունը հայտնել էր, որ Հակակոռուպցիոն կոմիտեում քննվող քրեական վարույթի ընթացքում փաստական տվյալներ են ձեռք բերվել այն մասին, որ ոստիկանության նախկին պետ Վ.Գ.-ի (Վլադիմիր Գասպարյան-խմբ) դուստրը՝ Յ.Գ.-ն, միջոցներ տրամադրելով եւ խոչընդոտներ վերացնելով, օժանդակել է 2012-2018 թվականներին կառավարությանն առընթեր ոստիկանության պետի տեղակալ-ոստիկանության զորքերի հրամանատարի պաշտոնը զբաղեցրած Լ.Ե.-ին, որը, պաշտոնեական դիրքն օգտագործելով, 2015-2018 թվականների ընթացքում իրեն վստահված առանձնապես խոշոր չափերով վատնման եղանակով գույք է հափշտակել:

Ներկայացնում ենք լուսանկարներ նրա «Սթորի» բաժնից: ⇨

ՀՅՈՒՐԵՐԸ

«ՄԱՆԿԱԿԱՆ ԵՎՐԱՏԵՍԻԼ 2022»-Ի ԲԱՑՈՒՄ

Երեկ Երեւանում պաշտոնապես մեկնարկեց «Մանկական Եվրատեսիլ 2022»-ը: Այս տարի հոբելյանական է. այն անցկացվում է 20-րդ անգամ:

Մրցույթի բացման արարողությունը տեղի ունեցավ Հանրապետության հրապարակում, որտեղ այս տարվա բոլոր 16 երկրների պատվիրակների հետ միասին վառեցին հանրապետության գլխավոր տոնածառի լույսերը:

«Մանկական Եվրատեսիլ 2022»-ի բացման արարողության հաղորդավարներն են 2011թ.-ին մրցույթում Հայաստանը ներկայացրած Դալիթան, հաղորդավար Համլետ Առաքելյանը եւ «Եվրատեսիլ 2014»-ում Հայաստանի պատվիրակ Արամ mp3-ն:

Ցուցադրվեց հատուկ «Մանկական Եվրատեսիլ»-ի համար գրված մյուզիքլ, ապա ելույթ ունեցան Հայաստանը տարբեր տարիներին ներկայացրած մասնակիցները: Նշենք, որ մրցույթի գլխավոր համերգը տեղի է ունենալու դեկտեմբերի 11-ին Կարեն Դեմիրճյանի անվան մարզահամերգային համալիրում:

Այս տարի մրցույթին մասնակցում են Հայաստանը, Ալբանիան, Ֆրանսիան, Վրաստանը, Իռլանդիան, Իտալիան, Ղազախստանը, Մալթան, Հյուսիսային Մակեդոնիան, Լեհաստանը, Պորտուգալիան, Սերբիան, Իսպանիան, Միացյալ Թագավորությունը, Նիդերլանդները եւ Ուկրաինան: Հայաստանը ներկայացնում է 14-ամյա Նարե Ղազարյանը:

ԼԻԴԱ ԵՂԻԱԶԱՐՅԱՆ

ԼՈՒՐԵՐ

ԼԱՎԱԳՈՒՅՆ ԽԱՂԱՑՈՂ

Աշխարհի առաջնության 1/8 եզրափակիչի Բրազիլիա-Հարավային Կորեա հանդիպման լավագույն խաղացող է ճանաչվել Ֆրանսիայի չեմպիոն ՊՍԺ-ի եւ Բրազիլիայի հավաքականի 30-ամյա հարձակվող Նեյմարը:

Նա դարձել էր մեկական գոլի եւ գոլային փոխանցման հեղինակ: Բրազիլիան հաղթել է 4:1 հաշվով եւ քառորդ եզրափակչում կմրցի աշխարհի փոխչեմպիոն Խորվաթիայի հետ:

Խմբային փուլի առաջին տուրի խաղում ոտնաթաթի վնասվածք ստացած Նեյմարը երկու խաղ բաց թողնելուց հետո լիարժեք վերականգնվել է եւ մեկնարկային կազմում խաղաց 80 րոպե:

Խորվաթիա-Բրազիլիա հանդիպումը տեղի կունենա դեկտեմբերի 9-ին եւ կմեկնարկի Երեւանի ժամանակով 19:00-ին:

ՎԱՃԱՌՔԸ ՍԿՍՎԵԼ Է

Փարիզի ամառային օլիմպիական խաղերի տոմսերի վաճառքի գրանցումը սկսվել է: Գրանցումը բաց է լինելու մինչեւ հունվարի 31-ը, եւ երկրպագուները, որոնք ցանկանում են մասնակցել 2024 թվականի օլիմպիական խաղերին, կարող են գրանցվել ցանկացած պահի մինչեւ այդ ժամանակը, որպեսզի կարողանան մասնակցել խաղարկությանը եւ ձեռք բերել տոմսերի փաթեթները: Տոմսերի վաճառքի հաջորդ փուլը կմեկնարկի 2023 թվականի փետրվարին, երբ կսկսվեն տոմսերի փաթեթների վաճառքները:

Փարիզի 33-րդ ամառային օլիմպիական խաղերը կկայանան 2024 թվականի հուլիսի 26-ից օգոստոսի 11-ը: Խաղերի բացման արարողությունը կլինի բացառիկ, քանի որ առաջին անգամն է, որ այն անցկացվելու է ոչ թե մարզադաշտում, այլ Ֆրանսիայի սրտում՝ Սեն գետի երկայնքով: Փարիզը Լոնդոնից հետո երկրորդ քաղաքն է, որը երրորդ անգամն է հյուրընկալում օլիմպիական խաղերը (1900, 1924, 2024): 33-րդ ամառային օլիմպիական խաղերի բացման արարողությունը խորհրդանշական օր է, քանի որ 1924 թվականին խաղերի փակման արարողությունը կայացել է այդ օրը:

Մասնակից հավաքականները բացման արարողությանը կմասնակցեն նավակներով: Փարիզի օլիմպիական խաղերում 32 մարզաձեւերից կխաղարկվեն 329 մեդալներ, իսկ մասնակիցների թիվը կգերազանցի 10.000-ը: Այս խաղերում մեկ նոր մարզաձեւ կա՝ «բրեյք դանս»-ը: Փարիզի օլիմպիական խաղերի մի քանի մարզաձեւերի մրցումներ կանցկացվեն Թահիթիում, Նանտում, Լիոնում, Մարսելում, Սենթ-Էթյենում եւ այլն: Այս խաղերում կաշխատեն մոտ 45.000 կամավոր աշխարհի տարբեր երկրներից:

Փարիզի խաղերի կազմկոմիտեն ներկայացրել է նաեւ ՕԽ-ի թալիսմանին՝ մասկոտին: Թալիսմանը, որը ստացել է Ֆրիգ (Phryges) անվանումը, նման է ֆրանսիական գլխարկների եւ ունի կարմիր գույն: Ֆրիգիական գլխարկը համարվում է ֆրանսիական հեղափոխության եւ ազատության խորհրդանիշ:

● *Դեկտեմբերի 8-ին Հ. Պարոնյանի անվան երաժշտական կոմեդիայի պետական թատրոնում տեղի կունենա «Չինացին էլ կարող է հայ լինել» ներկայացումը: Տոմսերի արժեքը՝1000-3000 դրամ: Սկիզբը՝ժամը 19:00-ին:*

ԵՂԵ՛Ք ՏԵՂԵԿԱՑՎԱԾ

Էջը՝ ՌՈԶԱ ՊՈՂՈՍՅԱՆԻ

ԻՐԱՎԱԿԱՆ

ՀԱՐՑ. Ովքե՞ր են համարվում քրեական պատասխանատվության սուբյեկտներ:

Ստեփան Միքայելյան (39 տարեկան)

ՊԱՏԱՍԽԱՆ. Քրեական պատասխանատվության ենթակա է մեղսունակ ֆիզիկական անձը, որի 16 տարին լրացած է եղել հանցանքը կատարելու պահին, ինչպես նաեւ իրավաբանական անձը:

Այն անձը, որի 14 տարին լրացած է եղել հանցանքը կատարելու պահին, ենթակա է քրեական պատասխանատվության սույն օրենսգրքի 155-161-րդ հոդվածներով, 166-170-րդ հոդվածներով, 191-րդ հոդվածով, 198-րդ հոդվածով, 252-րդ հոդվածով, 253-րդ հոդվածի 2-րդ կամ 3-րդ մասով, 254-րդ հոդվածի 2-րդ կամ 3-րդ մասով, 258-րդ հոդվածով, 264-րդ հոդվածի 2-րդ կամ 3-րդ մասով, 297-րդ հոդվածով, 338-րդ հոդվածով, 339-րդ հոդվածով, 397-րդ հոդվածով կամ 398-րդ հոդվածով նախատեսված հանցանքների կատարման համար:

ՀՀ քննչական կոմիտե

«ԺՈՂՈՎՈՒՐԴ». Եթե անձը հասել է նախատեսված տարիքի, սակայն մտավոր զարգացման մեջ հետ մնալու հետեւանքով ունակ չի եղել գիտակցելու իր արարքի հակաիրավականությունը կամ ղեկավարելու իր արարքը, ապա ենթակա չէ քրեական պատասխանատվության:

ՏՆՏԵՍԱԿԱՆ

ՀԱՐՑ. Ինչպիսի՞ն է լինում օգտակար հանածոյի արդյունահանման թույլտվության բովանդակությունը:

Արմինե Բաղմանյան (42 տարեկան)

ՊԱՏԱՍԽԱՆ. Օգտակար հանածոյի արդյունահանման թույլտվությունը մասնավորապես ներառում է՝

- թույլտվության հերթական համարը, տրման տարին, ամիսը, ամսաթիվը եւ ժամկետը,
-տրամադրված պաշարների քանակն՝ ըստ կարգերի, եւ հանքի տարեկան արտադրողականությունը,
-ընդերքի տեղամասի ծայրակետերի կոորդինատները՝ միասնական կոորդինատային համակարգով,
- օգտակար հանածոյի եւ (կամ) ուղեկից բաղադրիչների անվանումը:

ՀՀ շրջակա միջավայրի նախարարություն

«ԺՈՂՈՎՈՒՐԴ». Օգտակար հանածոյի արդյունահանման թույլտվությանը կցվում են համապատասխան փորձաքննություններ անցած օգտակար հանածոյի արդյունահանման նախագիծը, հանքարդյունահանման պայմանագիրը եւ լեռնահատկացման ակտը, որոնք թույլտվության անքակտելի մասերն են:

ԼՈՒՐ ԿԱԴՐ

Լուսանկարն արվել է Երեւանում

Երեւանի մետրոպոլիտենի Զորավար Անդրանիկ կայարանում երեկ եւ այսօր ընթանում են «Մանկական եվրատեսիլ» երգի նկարահանման աշխատանքները, եւ «Ժողովուրդ» օրաթերթի տեսախցիկը ֆիքսել է նախապատրաստական աշխատանքներից մի կադր:

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Մեր թերթը
Բաժանորդագրվելու
համար կարող եք դիմել

«Հայմամուլ» ՓԲԸ
հեռ. 45-82-00, 45-19-11

«Հայփոստ» ՊՓԲԸ
հեռ. 51-45-46, 51-45-47

«Բլից-Մեդիա» ՍՊԸ
հեռ 52-5301

Առաքումը՝ ԱՆՎՃԱՐ:

Ձեզ հետաքրքրող ցանկացած հարցով կարող եք դիմել «Ժողովուրդ» օրաթերթի խմբագրություն (**010 54-64-23** հեռախոսահամարով), եւ մենք անպայման կանդրադառնանք ձեր բարձրացրած բոլոր խնդիրներին:



«Ժողովուրդ» օրաթերթում հրապարակված նյութերը արտատպելիս կամ ընթացիկ մեջբերումներ անելիս պետք է պարտադիր գրառել հետեւյալ նախադասությունը. «Շարունակությունը կարող եք կարդալ «Ժողովուրդ» օրաթերթի այսօրվա համարում»:

ԱՌԱՋԱՐԿ
հայկական տպագիր մամուլից

«Ժողովուրդ» օրաթերթին բաժանորդագրվելու համար կարող եք լրացնել հետեւյալ բլանկը եւ ուղարկել նշված հասցեով: Ամեն օր թերթը կհասնի ձեր նախընտրելի վայր:

Բաժանորդագրության բլանկ

Անուն՝ ____________
Ազգանուն՝ ____________
Առաքման հասցե՝ ____________
Բջջային եւ/կամ
քաղաքային հեռախոս՝ ____________

Հեռ.՝(060) 490049
0023, Արշակունյաց 2, 5-րդ հարկ, 518ա.

Լրատվական գործունեություն իրականացնող՝
«Ժողովուրդ թերթի խմբագրություն» ՍՊԸ
Հասցեն՝ ք. Երեւան, Աբովյան 22ա/3, հեռ՝ **010 54-64-23**
Պետական գրանցման վկայականի համարը՝ 03Ա089086
տրված է 24.11.2010
Ստորագրված է տպագրության **6.12.2022**
Հասցեն՝ Գեղարքունիքի մարզ, ք. Վարդենիս, Վ.Համբարձումյան 2/21

Գլխավոր խմբագիր՝
ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

Տպագրված է «ԳԻՆԴ» տպարան ՍՊԸ հրատարակչությունում
Խմբագրություն հանձնված նյութերը չեն գրախոսվում եւ չեն վերադարձվում, Գ նշանով նյութերը գովազդային հրապարակումներ են, որոնց համար խմբագրությունը պատասխանատվություն չի կրում: